Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր
քարտուղար պարոն Սերգո Աթանեսյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Գործուղված աշխատակցի անունը, ազգանունը.**
   Լուսինե Ավետիսյան
   Տաթևիկ Ցյուրքեր

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Ռազմավարական քաղաքականության վարչության պետ
   Խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթների համակարգող

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Մոլդովա, ք. Քիշենև 2024 թվականի փետրվարի 15-ից 16-ը

4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում)**
   Համաշխարհային Բանկ

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Մասնակցություն «ԵՄ շրջակա միջավայրի համար» ծրագրի 4-րդ բաղադրիչի ներքո կենսաբազմազանության պաշտպանության ոլորտի առաջընթացների վերաբերյալ քննարկմանը և փորձի փոխանակում:

6. **Քննարկված թեմաները (հարցերը).**

- «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի համար» ծրագրի շրջանակում Արևելյան գործընկերության երկրները ներկայացրեցին առաջընթացը
- Ծրագրի ղեկավար, Եվրոպական հանձնաժողովի հարևանության և ընդլայնման բանակցությունների ծրագրի ներկայացուցիրը ներկայացրեց ծրագրի արդյունքները:
- Կենսաբազմազանության պահպանությունն ու էկոհամակարգերի վերականգնումն ապահովելու նպատակով անտառատնկման/անտառվերականգնման ֆինանսավորում

- Մոլդովայի անտառների ընդարձակման և վերականգնման ազգային ծրագիրը և դրա մարտահրավերները
- Համաշխարհային բանկի աշխատանքն Ուկրաինայի անտառտնտեսության ոլորտում կլիմայի ֆինանսավորման և ածխածնի գնագոյացման հնարավորությունների բացահայտման ուղղությամբ
- Եվրոպական ներդրումային բանկի ներկայացուցիչ կողմից ներկայացվեց բնական կապիտալի ֆինանսավորման ծրագրի արդյունքները
- Էմերալդ ցանցնի և Նատուրա 2000-ի առաջխաղացում
- Էմերալդ ցանցի օրենսդրական գործընթացը և ձեռքբերումները համաեվրոպական մակարդակում
- Կենսաբազմազանության պահպանության առաջխաղացում ԱԳԵ երկրներում. մարտահրավերների հաղթահարում և հետագա քայլերի ձեռնարկում,
- Էմերալդ ցանցից անցում դեպի Նատուրա 2000
- Ուկրաինայում առաջիկա LIFE նախագծի համառոտ ներկայացում
- ԵՄ-ում անտառհատումներին ուղղված կարգավորումները
- Մոլդովական անտառներ. էկոհամակարգային ծառայությունների միջոցով անտառների կառավարման և պահպանման նպատակով հավասարակշռված մոտեցման մշակում
- Հանդիպման շրջանակում փետրվարի 16-ին ներկայացվեց նաև «Մոլդովայի Հանրապետությունում պահպանվող բարձր արժեք ունեցող անտառների բացահայտումը» զեկույցը:
- Հանդիպման ավարտին մասնակիցները այցելեցին Կոդրիի ազգային պարկ:

**7. Հանդիպումները, ելույթները.**

Հայաստանի ներկայացուցիչները ներկայացրեցին կենսաբազմազանության ոլորտում բարեփոխումները, ինչպես նաև «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի համար» ծրագրի 4-րդ բաղադրիչի ներքո իրականացված աշխատանքները, որի շրջանակում վերանայվել են Հայաստանի թեկնածու Էմերալդ տարածքները, կազմվել է Էմերալդ ցանցի ստեղծման խթանման գործողությունների ազգային ծրագիրը, մշակվել են Էմերալդ ցանցի տարածքների կառավարման պլանների պատրաստման ուղեցույցեր, ինչպես նաև մշակվելու է 2 պիլոտային կառավարման պլան:

**8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Հանդիպմանը նպատակ եղել է փորձի փոխանակումն և «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի համար» ծրագրի շրջանակում արդյունքների ամփոփումը:

Համաշխարհային բանկի կողմից երկրներին առաջարկվեց ներկայացնել նոր ծրագրային առաջարկներ, որոնք ուղղված կլինեն կենսաբազմազանության, այդ թվում՝

անտառների պահպանության բնագավառում այնպիսի կարգավորումների ներդրմանը, որոնք կհանգեցնեն ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացմանը:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Առաջարկություններ չեն ներկայացվել:

Հարկ է նշել, որ հանդիպմանը հրավիրված են եղել Ադրբեջանի կառավարության անդամներ, սակայն Ադրբեջանի Համաշխարհային բանկի ներկայացուցիչը նշեց, որ նրանք չեն կարողացել ներկա գտնվել հանդիպմանը: Չնայած այն հանգամանքին, որ հնարավորություն կար նաև միանալու առցանց ձևաչափով, չի օգտագործվել նաև այդ հնարավորությունը:

Գործուղվող՝ Լուսինե Ավետիսյան

Գործուղվող՝ Տաթևիկ Ցյուրքեր